

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐՕՐՅԱ ՄԱՍՈՒՆՈՒՄ

Այն, որ թե խորհրդահայ և թե մերօրյա մամուլում փոխառությունները լայն գործածություն ունեն, կասկած չի հարուցում: Խոսքն այստեղ նոր և նորագույն անվանվող փոխառությունների մասին է: դրանք հին և հնագույն փոխառություններից տարբերվում են ոչ միայն նրանով, որ մեզ են ավանդվել հին հունարենից, լատիներենից կամ եվրոպական լեզուներից, այլև այն, որ հին և հնագույն փոխառությունները համաժամանակյա կտրվածքով չեն գիտակցվում որպես փոխառություններ, և մասնագետ պիտի լինել, ասենք, ուրարտերենից կամ զենդերենից ավանդված բառերը տարբերակելու համար: Նշենք, որ նոր և նորագույն փոխառությունները առհասարակ լայն գործածություն ունեն տարբեր լեզուներում: Դրանք առայսօր խիստ կենսունակ են մի շարք ոլորտներում՝ բժշկություն, իրավաբանություն, գիտության այլ ճյուղերում, լայն գործածություն ունեն հասարակական-քաղաքական, պետական կառավարման ոլորտներում: Նշենք, որ խորհրդային շրջանում դրանք հայոց լեզու էին քափանցում հիմնականում ռուսերենի միջոցով, և տառադարձությունն էլ հարմարեցվում էր ռուսերենին: Այն կարգավորվում էր ՀԽՍՀ մինիստրների սովետին կից տեղմիմաբանական կոմիտեի համապատասխան որոշումներով, որոնց հեղինակները հիմնականում մեծ գիտնականներ Գ.Բ.Տաիուկյանն ու Յովի.Բարսեղյանն էին: Սրանցով հանդերձ օտար բառերի տառադարձության խնդիրներ կար և նախկինում, և առավելապես այսօր: Մանավանդ անկախության առաջին շրջանում մասնավորապես հատուկ անունների տառադարձության մեջ կատարյալ խառնաշփոթ էր տիրում: Հավասարապես գործածվում էին հետևյալ շարքերը՝ *Ռեյզան // Ռեյզըն, Տետչեր // Թետչեր // Թետչըր, Քոլ // Կոլ, Քիսինջեր // Կիսինջեր // Քիսինջըր, Քարտեր/Կարտեր// Քարտըր, Ջուդիթ // Դուդիթ // Յուդիթ, Նեթանյահու // Նաթանյահու, Մասխադով // Մասխադով, Իցխակ // Իցհակ, Կիզլյար // Դզլար, Սկան // Աքան* և այլն: Այս և առհասարակ այլ հատուկ անունների տառադարձության հարցը այսօր էլ օրակարգային է և լուծման կարոտ:

Ի տարբերություն արևմտահայ մամուլի, որը հընթացս նաև գոյապահպանման խնդիր է լուծում, արևելահայ մամուլը իր էջերը լայնորեն տրամադրում է փոխառություններին, և, թվում է, ոչ միայն չի խորշում, այլև հաճախ փոխառություն է գործածում այնտեղ, որտեղ կարելի է դա փոխարինել հայերեն համարժեքով: Ըստ երևույթին, դա խորիմաստության տրամադրվածություն է ստեղծում, ավելի խելոք երեւալու ծգտում: «Յառաջ» օրաթերթի 21.016,

21.017, 21018 համարներում հաշվեցինք փոխառյալ 43 փոխառության, որոնցից 10 – ը բժշկական տերմիններ էին: Մերօրյա թերթերի յուրաքանչյուր համարում դրանք շատ են մոտ 10 անգամ: /

Ժամանակ առ ժամանակ մամուլի էջերում տեղ են գտնում փոխառություններ, որոնք հետագայում իրենց տեղը զիջում են այլ փոխառությունների պայմանավորված հասարակական – քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններով:

Ամենատարածված փոխառությունը, անշուշտ, *ինտերնետ* բառն է: Մամուլում հանդիպում է *համացանց* հայերեն թարգմանությունը: Բառը ինքն էլ արհեստածին է, և թերևս հայերեն թարգմանությունը ամբողջական համարժեք չէ: Մինչդեռ *կոմպյուտեր* բառի հայերեն թարգմանությունը՝ *համակարգիչ*, կարծես կարողանում է դիմանալ: Այս բնագավառի մի շարք բառեր դարձյալ գործածվում են հիմնականում փոխառյալ տարբերակով՝ *աքսեսուար(ներ)*, *մոնիտոր*, *դիսփլեյ*, *պրինտեր (տպիչ)*, *ֆայլ*, *սայթ(կայք)*, *սկաներ*, *քարթրիջ*, *դիսկ*, *դիսկետ*, *ֆլոփի* և այլն:

Աշխարհի մակարդակով բարձրացվում են մի քանի հարցեր, որոնց անվանումները չեն իջնում թերթերի էջերից: Դրանցից են՝ *տեռորիզմ (տեռոր, տեռորիստ)*, ունի հայերեն համարժեք *ահաբեկչություն (ահաբեկիչ)*, կա նաև *ահաբեկություն*, որ թերևս ավելի ճիշտ է: Բառակապակցություններում *միջազգային ահաբեկչություն*, *ահաբեկչական ակտ*, *ահաբեկչական գործողություններ*, *ինքնասպան - ահաբեկիչ կամիկաժե* փոխառության փոխարեն:

Թրաֆիքինգը մեզանում բոլորովին նոր երևույթ է՝ մարդկանց անօրինական վաճառք, մասնավորապես կանանց վաճառք, որոնք արտահանվում են Թուրքիա կամ արաբական երկրներ:

Անկախության տարիներին մեր բառապաշար ներխուժեց *ՄԴԻԴ* հապավումը, որը վերջին տարիներին թարգմանված է *ՄԻՆԿ* կամ *ՋԻԱԴ*: Դրա դեմ մշակված հայկական դեղամիջոցի անվանումն էլ օտար է՝ *արմենիկում*:

Աշխարհին հուզող խնդիրներից մեկն էլ *գլոբալիզացիան* է: Սրա հայերեն համարժեքը կարծես գտնված չէ, սակայն բառը լայն գործածություն ունի մամուլում:

Ռեյտինգ բառը կար նաև խորհրդահայ մամուլում և գործածվում էր սպորտսմենների, մասնավորապես չախմատիստների ցուցանիշները գնահատելու նպատակով: Այն տարիներին չէին անցկացվում պաշտոնատար անձանց, քաղաքական գործիչների վարկանիշը ստուգող հարցախույզներ: Այժմ դա, կարելի է ասել, մոդա է: Մամուլը լի է արժանահավատ և ոչ արժանահավատ հարցախույզներով այդ անձանց *ռեյտինգը՝ վարկանիշը* որոշելու նպատակով:

Ասես միանգամից մամուլ մտավ *մենտալիտետ* // *մենթալիտետ* բառը, այն լայն տարածում ունի ինչպես միայնակ, այնպես էլ բառակապակցություններում՝ *հայի (հայկական) մենտալիտետ*, *եվրոպացու մենտալիտետ*, *ֆրանսիա-*

ցու մենտալիտետ, ազգային մենտալիտետ և այլն: Կա համարժեքը մտածելակերպ, խելք, սակայն գրեթե միշտ գործածվում է փոխառյալ տարբերակով, ինչը մտածել է տալիս, որ այնուամենայնիվ թարգմանությունը լիարժեք չէ:

Լիզիտիմ է անվանվում արդար ընտրությունների հետևանքով ձևավորված կառավարող մարմինը կամ ղեկավար անձը՝ ոչ *լիզիտիմ* հակամիջով: Մամուլը պարզապես չի է այս փոխառյալ բառով: Հազվադեպ է կիրառվում օրինական թարգմանությունը: Նախապատվությունը տրվում է փոխառյալ բառին:

Խարիզմա, *խարիզմատիկ* փոխառյալ բառով բնութագրվում են հանրության մեջ համակրանքի արժանացած հիմնականում քաղաքական գործիչները: Դա ներքին և արտաքին հատկանիշների համագումարից առաջացած երևույթ է, որը չկար նախկինում, որտեղ նպատակահարմար չէր խոսել պաշտոնյայի համակրելի կամ անհամակրելի լինելու մասին:

Նախկինում կար և լայն գործածություն ուներ *կերպար* բառը: Դա, ըստ երևույթին, բավարար չեղավ և մամուլ ու դրա հետ միասին կենցաղ մտավ *իմիջ* բառը: Մի որոշ էտապում այն գրեթե չէր իջնում թերթերի էջերից: Սրա հետ մեկտեղ առաջ եկավ *իմիջմեյքեր* բառը անձ, որը մասնագիտացած է այլոց կերպարների իմիջների ձևավորմամբ:

Կռալիցիա բառը նախկինում գործածվել է այլ պետությունների կառավարությունների ձևավորման սկզբունք նշանակելու համար: Որպես կանոն որևէ կուսակցություն պառլամենտներում չի ունենում այնպիսի մեծամասնություն, որ կարողանա միայնակ կառավարություն ձևավորել և ստիպված է լինում կառավարություն ձևավորել խորհրդարանական այլ ուժերի հետ: Դա էլ *կռալիցիոն* կառավարությունն է:

Կոռուպցիա բառը կար խորհրդային ժամանակներում այլ երկրների ներքին վիճակը բնութագրելու և բուրժուական չինովնիկների էությունը ցույց տալու համար: Սա, ըստ էության, միայն կաշառակերությունը չէ, այլև *պրոտեկցիոնիզմը* (հովանավորչությունը) պաշտոնական դիրքի չարաշահումները և այլն: Մեր ժամանակներում երևույթը իր անվանումով այնքան է տարածված, որ նախագահին կից ստեղծված է *կոռուպցիայի* դեմ պայքարի հանձնաժողով: Քաղաքական գործիչներից մեկը մի գրքույկ է հրատարակել՝ «Կռալիցիա + կոռուպցիա = կլեպտոկրատիա» (Սոալոտ 2405): *Կլեպտոկրատիա* նշանակում է գողերի իշխանություն: Քաղաքական գործիչներից մեկն էլ շրջանառության մեջ դրեց *պլուտոկրատիա* տերմինը, որ նշանակում է փողի իշխանություն:

Ցանկանալով ընդգծել իայ – ռուսական բարեկամության անխախտ լինելը՝ ռուս պետական բարձրաստիճան պաշտոնյան հայտարարեց, որ Հայաստանը Ռուսաստանի *ֆորպոստն* է Անդրկովկասում: Նշանակում է առաջին ռազմական հարվածն իր վրա ընդունող միջնաբերդ: Արտահայտությունը, ինչպես և պետք էր, լավ չընդունվեց և պատճառ դարձավ շահարկումների

խեղճ ֆորպոստ (Յայկական ժամանակ, 1280), *ֆորպոստների կյանքից, ֆորպոստի ֆորպոստ* (Իրավունք, 1055):

Մերօրյա մամուլում իր հաճախականությամբ հաստատ ոչ մի բառ չի մրցի *դուար* բառի հետ: *Դուլարիզացիա, դուլարի կուրս, դուլարի արժևորում, դուլարի արժեզրկում, դուլարի առևտուր, դուլարի պահանջարկ, դուլար արտահանել, դուլար նետել շուկա, դուլար գնել, դուլար վաճառել, դուլարի գույներ, դուլարի կեղծում, դուլարի պաշտպանիչ շերտեր* և այլն:

Դուլարի հետ առնչվող ամենահաճախադեպ բառը *չենքն է* արժույթի փոխանակում: Սրանց հետ միասին *եվրո* դրամական միավորի անվանումը: Գումարած *տրանսֆերտ* բառը օտար պետություններից իրենց հարազատներին ուղղված դրամական հոսքերը: Նաև *մարժա* տարադրամի առքի և վաճառքի գների միջև եղած տարբերությունը (168 ժամ, 24):

Տնտեսական ոլորտից մամուլում գործածվող հաճախադեպ բառերից մեկն էլ *բիզնես* բառն է: Անգլերենում լինելով բավական անմեղ բառ գործ, զբաղմունք, աշխատանք խորհրդային շրջանում այն բացասական երանգավորում ուներ և ասոցիացվում էր շահագործողական աշխատանքի հետ: *Անկախության սկզբնական շրջանում* *Յայաստանում բոլոր առևտրականները բիզնեսմեն* հորջորջվեցին:

Արտաքին քաղաքական ոլորտում հռչակված է *կոմպլիմենտարիզմի* սկզբունքը: Ոչ թե ոռոսամետություն, ոչ թե արևմտամետություն, այլ *կոմպլիմենտար* քաղաքականություն բոլոր երկրների հանդեպ հավասարապես բոլորի հետ նորմալ հարաբերություններ ունենալու քաղաքականություն:

Մեկ այլ փոխառություն դարձյալ չի իջնում թերթերի էջերից *մոնիթորինգ* // *մոնիտորինգ* ստուգումներ, վերահսկողություն, ուսումնասիրություններ սրանք և սրանց ամբողջությունը: Բառն իրենց հետ բերեցին օտար վարկատուները, որոնք ստուգում էին իրենց տված վարկերի արդյունավետությունը: Բառն այսօր այնքան է հասարակացել, որ ցանկացած ստուգում անվանվում է *մոնիթորինգ*:

Տևական ժամանակ թերթերի էջերում ամենագործածական բառը օպտիմալացումն էր: Այս բառի ներքո իրականացվեցին դպրոցների միացումներ և ուսուցիչների մասսայական կրճատումներ:

Հետխորհրդային շրջանում մամուլ ներխուժեց *բոմժ* հապավումը (без определенного места жительства): Հետագայում այս հապավումը գործածվեց ոչ միայն ուղիղ անտուն, փողոցային իմաստով, այլև փողոցային հոգեբանության, մտածողության տեր նշանակությամբ *բոմժի հոգեբանություն ունենալ, բոմժի մտածելակերպ* և այլն:

Ժամանակ առ ժամանակ մամուլում հանդիպում է վիրտուալ երևակայական, իրականում գոյություն չունեցող բառը: *Վիրտուալ աշխարհ, վիրտուալ*

պետություն (Առավուտ, 2418): Ասել կուզի պետություն, որին միայն կարելի է սիրել՝ չունենալով նրա հանդեպ ոչ մի պարտավորություն:

Ֆորմատ բառը գործածվում է թե փոխառյալ և թե հայերեն համարժեքով ձևաչափ: «Այլ խնդիր է, թե ով ինչ *ֆորմատ* կստեղծի» (Առավուտ, 2418):

Լիցենզիա բառը նույնպես գործածվում է փոխառյալ և հայերեն *արտոնագիր*, համարժեքներով:

Քաղաքական գործիչները հաճախ են միմյանց մեղադրում աշխատանքի *իմիտացիա* ստեղծելու մեջ. այսինքն ոչ թե աշխատանք, այլ դրա նմանակում այլոց խաբելու նպատակով: «Մինչև հիմա եղածը բանակցությունների *իմիտացիա* է միայն» (Առավուտ, 2422):

Որոշ քաղաքական գործիչների խոսքը լեցուն է փոխառություններով: Այսպես, կուսակցություններից մեկի ղեկավարի «Առավուտում» տպագրված կարճ խոսքում կան հետևյալ փոխառությունները՝ *խունտիզմ*, *բլանկիզմ*, *ավանտյուրիզմ*, *տեռորիզմ*, *բոնապարտիզմ*, *պրոցես*, *կոնսոլիդացիա*, *դոկտրինա*, *արքայական գամբիտ*, *լիբերալ*, *մոնիտորինգ*, *կոռուպցիա*, *դիսկրիմինացիա*, *ստարտապիս պայմաններ*, *օլիգարխ*, *ինտելեկտուալ*, *ֆրակցիոն պայքար*, *բյուլետեն*, *ուռնա* (2418):

Այսպիսով եզրակացնենք.

1. Ինչպես խորհրդահայ, այնպես էլ մերօրյա մամուլը պարզապես հեղեղված է նոր և նորագույն փոխառություններով:
2. Հնագույն և հին փոխառությունները այսօր չեն գիտակցվում իբրև փոխառություններ, ուստի այստեղ դրանք չեն դիտարկվում. խոսքը հին հունարենից, լատիներենից, եվրոպական տարբեր լեզուներից փոխառված հասարակական – քաղաքական ոլորտում լայնորեն գործածվող բառերի մասին է:
3. Մեզանում զգալի աշխատանք է տարվել փոխառությունների հայերեն համարժեքներ ստեղծելու համար (Ջահուկյան, Բարսեղյան): Սակայն, այնուամենայնիվ, դրանց թիվը մամուլում գրեթե անհաշիվ է և փոխառություն սփյուռքահայ մամուլի, որը գոյապահպանման խնդիր է լուծում և հակված է բոլոր փոխառությունների թարգմանությանը:
4. Օտար հատուկ անունների տառադարձության հարցում դեռ կան լուծման կարոտ հարցեր:
5. Ժամանակ առ ժամանակ մամուլում գործածվում են տարբեր փոխառյալ բառեր, որոնք այդ ընթացքում քաղաքականության օրակարգում են: